

2009 թվականի առաջին եռամսյակի ընթացքում նախարարությունում կազմակերպվել է քաղաքացիների 17 ընդունելություն, այդ թվում նախարարի մոտ կայացել է 16, փոխնախարարի մոտ՝ 1 հանդիպում:

Քաղաքացիների կողմից ներկայացված խնդիրների մի մասը եղել է անձնական բնույթի (աշխատանքի ապահովում, ֆինանսական օժանդակություն, բնակարանի կամ շինանյութի ապահովում): Նախարարը խոստացել է հնարավորինս աջակցել դիմողներին և իր իրավասության շրջանակներում լուծել է ներկայացված խնդիրները կամ ուղղորդել համապատասխան մարմիններ:

Հանդիպումների ընթացքում եղել են նաև գործնական առաջարկներ (գյուտեր, խորհրդատվական ծառայություններ, արտադրության ընդլայնման և ծրագրերի իրականացման համար պետական աջակցություն): Նախարարը՝ ծանոթանալով ծրագրերին, առաջարկել է ներկայացնել բիզնես պլան և նշել այն հիմնարկների հետ համագործակցության հնարավորությունը, որոնք համապատասխանում են տվյալ ծրագրերի իրականացմանը:

Նշված ժամանակահատվածում երկու քաղաքացի չի ներկայացել նշանակված հանդիպումներին: